585 Անցկացրու ինձ գավիթով

1. Անցկացրու ինձ գավիթով
Սրբության փառքի խորանը,
Ես ուզում եմ, Տեր, տեսնել երեսը Քո,
Ես փնտրում եմ Քեզ ամբողջ հոգով:
Բարձրացրու ինձ, շնորհիր կանգնել
Գահիդ առջև օրհներգությամբ,
Արդարությունդ եմ ուզում, իմ Տեր,
Սրբաբույր ներկայությունդ:

Տա՛ր ինձ, Տեր, խորանիդ սրբության մեջ,
Գառնուկի արյունով անցկացրու,
Տա՛ր ինձ, Տեր, խորանիդ սրբության մեջ,
Վերցրու որպես զոհ անձս լիովին:

2. Զորացրու ինձ Քո Հոգով,
Որ անոթ լինեմ սրբության,
Հոգով ուզում եմ, Տեր, ձուլվել Քեզ հետ:
Տեր, ապրում, շնչում եմ Քեզ համար:
Ապրեցրու ինձ փառքիդ համար,
Որ երգեմ սերդ օրհներգությամբ,
Լցրու ինձ Քո Հոգով՝ ապրեմ Քո մեջ,
Որ տեսնեն շնորհքդ, Տեր, ինձ վրա: